unicef
յուրաքանչյուր
երեխայի համար

Երեխայի լավագույն շահերը

ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՁԵՌՆԱՐԿ

Երեխայի լավագույն շահերը

ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՁԵՌՆԱՐԿ

Երևան, 2022

Ուղեցույց-ձեռնարկը ստեղծվել է ՀՀ փաստաբանների պալատի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից:
Կազմող՝ **Գայանե Դեմիրչյան**

Կազմման աշխատանքներին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատից Հարութ Ակլունցը, ՅՈՒՆԻՍԵՖ-ից **Վիկտորյա Օհանյանը**:

Ձեռնարկում բացահայտվում, վերլուծվում և համադրվում են «երեխայի լավագույն շահեր» հասկացության միջազգային և ներպետական չափանիշները, բացահայտվում են իրավակիրառ, այդ թվում՝ դատական պրակտիկայում առկա իրավիճակը, խնդիրները և զարգացումները: Ուղեցույց-ձեռնարկը նախատեսված է ինչպես ընտանեկան և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտացող փաստաբանների, այնպես էլ ոլորտին առնչվող այլ մասնագետների համար: Այն պարունակում է գործնական առաջարկներ ու խորհուրդներ և կարող է դառնալ արդյունավետ գործիք ոլորտն իրենց համար բացահայտող իրավաբանների ու փաստաբանների համար:

© «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ»
© ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ)

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ»-ի գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին։

«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ»
Զաքյան փող. 2, Երևան, 0010
Էլ. հասցե՝ info@advocates.am

ՅՈՒՆԻՍԵՖ
Պետրոս Ադամյան փող. 14, Երևան, 0010
Էլ. հասցե՝ yerevan@unicef.org

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված: Հիմնվելով 75-ամյա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար ավելի քան 25 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը: Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեությանը ծանոթանալու համար այցելեք www.unicef.am և www.babycef.am կայքերը:

Կազմի լուսանկարը՝ © **UNICEF Armenia/2017/Publicis Hepta**

Բովանդակություն

Ներածություն 7

1. Ի՞նչ է «երեխայի լավագույն շահը» 10

2. «Երեխայի լավագույն շահ» հասկացության ամրագրումը ՀՀ ընտանեկան օրենսգրքում 13

3. «Երեխայի լավագույն շահ» հասկացության մեկնաբանությունը դատական պրակտիկայում 16

4. «Երեխայի լավագույն շահերը» գնահատելու և որոշելու տարրերը, ընդհանուր մոտեցումներ 18

5. «Երեխայի լավագույն շահերի» որոշման չափանիշները երեխայի խնամքի, դաստիարակության և երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ դատական վեճերով 21

6. Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերով որպես «երեխայի լավագույն շահերի» բացահայտումն իրականացնող կարևոր և պարտադիր սուբյեկտներ 26

7. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դերն ու գործառույթները երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերով 30

8. Խորհուրդներ փաստաբաններին՝ Ինչ կարելի է անել երեխայի խնամքի, դաստիարակության և երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ դատական վեճերով «երեխայի լավագույն շահերի» ապահովման համար» 32

Օգտակար նյութերի ցանկ 34



©UNICEF Armenia/2021/Mahari

Ներածություն

2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում երեխայի իրավունքների պաշտպանության մասով ՀՀ Սահմանադրությունը կատարեց երեխայի իրավունքների սահմանադրական ամրագրման միջազգային ժամանակակից միտումներին, ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային[1] համահունչ կարևոր առաջընթաց քայլ:

Մասնավորապես Սահմանադրության 37-րդ հոդվածում ամրագրվեցին երեխայի հիմնական իրավունքները: Հատկանշական է, որ 37-րդ հոդվածի կառուցվածքի ու բովանդակության համար ելակետ է հանդիսացել ԵՄ Հիմնական իրավունքների մասին խարտիայի 24-րդ հոդվածը, որն էլ իր հերթին հիմնականում հիմնվել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի (երեխայի լավագույն շահ), 9-րդ (ծնողների հետ կանոնավոր փոխհարաբերություններ ունենալու իրավունք), 12-րդ և 13-րդ հոդվածների վրա (կարծիքի ազատ արտահայտումը և այն հաշվի առնելը):

Երեխայի իրավունքների սահմանադրական ամրագրումը նոր միտում է, որը ելնում է այն մոտեցումից, որ երեխան ոչ միայն պաշտպանության օբյեկտ է, այլև իրավունքների կրող և իրեն վերաբերող հարցերում որոշումներ կայացնելուն մասնակից[2]:

Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի հիմքում ընկած է երեխայի՝ տարիքի հետ զարգացող ինքնուրույնությունը խթանելու իրավական գաղափարը և ամրագրված է իրեն վերաբերող հարցերում կարծիք արտահայտելու իրավունքը, իսկ Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածում տեղ գտած «երեխայի լավագույն շահի» սկզբունքը: Այս սկզբունքը արտացոլված է նաև 37-րդ հոդվածի 3-րդ մասում որպես չափանիշ՝ ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու երեխայի իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելու համար: 37-րդ հոդվածի 4-րդ մասը սուբյեկտիվ իրավապահանջի հատուկ հիմք է նախատեսել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար:

Այս հոդվածով նախատեսված իրավունքները նախ և առաջ պաշտպանիչ դեր ունեն: Բայց միևնույն ժամանակ դրանք, նկատի ունենալով այս իրավունքների վերացական բնույթը, բնականաբար որոշակի մեխանիզմների կարիք ունեն և դրանով պայմանավորված՝ առաջացնում են պետության պոզիտիվ պարտականություններ հատկապես օրենսդրական կարգավորման բնագավառում:

Երեխայի իրավունքների հետ կապված հարցերում «երեխայի լավագույն շահը» սահմանադրական մակարդակով կարգավորված է միայն մի քանի երկրներում[3]:

«Երեխայի լավագույն շահ» հասկացությանը սահմանադրաիրավական կարգավիճակ հաղորդելը խոսում է այս սկզբունքի և դրա հիմքում ընկած իրավունքի՝ օրենքներում ու պրակտիկայում տարածական կերպով կիրառելու նպատակի առկայության մասին: ՍԴ այս իրավական դիրքորոշումն ինքնին խոսում է այն մասին, որ Սահմանադրության 37-րդ հոդվածում «երեխայի շահ» հասկացությունը պետք է մեկնաբանվի որպես երեխայի լավագույն շահ՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային համահունչ:

Սահմանադրական կարգավորումներին հետևելով՝ «երեխայի լավագույն շահը»

1 Ընդունվել է 20.11.1989 թ.: Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ. Հուլիսի 22-ին, ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում: Հայաստանը վավերացրել է նաև Կոնվենցիային կից երկու լրացուցիչ արձանագրությունները՝ «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրությունը» (ՀՀ համար ուժի մեջ է մտել 21.03.2005 թ.), և «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը» (ՀՀ համար ուժի մեջ է մտել 30.07.2005 թ.):

2 Տե՛ս Venice Commission Report on the Protection of Children's Rights, Adopted by the Venice Commission at its 98th Plenary Session, CDL-AD(2014) 005-e, կետ 12-13:

3 Տե՛ս Սերբիայի Սահմանադրության 65-րդ հոդված, Ալբանիայի Սահմանադրության 54-րդ հոդվածի 4 -րդ մաս, Իռլանդիայի Սահմանադրության 42ա հոդված:

օրենսդրական իրացում է ստացել նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքում՝ 2017 թ. դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխություններով[4], որի արդյունքում «երեխայի լավագույն շահը» ամրագրվել է որպես ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունք:

2015թ.-ի սահմանադրական փոփոխություններին համահունչ փոփոխվեց նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը[5], որտեղ առաջին անգամ սահմանվեց, որ ընտանեկան գործերը հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործեր են (հոդված 202, 1-ին մաս 1-ին կետ), մանրամասնվեց ընտանեկան վեճերով գործի քննության առանձնահատկությունները (հոդված 203) և ամրագրվեց «երեխայի լավագույն շահը» որպես ընտանեկան վեճերով գործերի քննության կարևորագույն սկզբունք և ընթացակարգային կանոն[6]:

Հատկանշական է, որ նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրքը առաջին անգամ ընտանեկան վեճեր քննելիս դատարանին տվել է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“ex officio”) պարզելու հնարավորություն: Առաջին հայացքից նման իրավակարգավորումը, կարծես թե, հակասում է քաղաքացիական դատավարության մրցակցային բնույթին, սակայն իրականում այն նպատակ է հետապնդում ապահովել երեխայի լավագույն շահերի բացահայտումը:

Նշված նորմը սկսել է կիրառվել 2018թ.-ի ապրիլի 9-ից, սակայն ակնհայտ է, որ դատարանները դեռևս խուսափում են ընտանեկան վեճերով ի պաշտոնե գործողություններ ձեռնարկել, թեև օրենսդիրը ոչ միայն վերջիններիս տվել է այդ իրավունքը, այլև ավելին՝ երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով պարտավորեցրել է ձեռնարկել օրենքով սահմանված բոլոր գործողությունները՝ գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով:

Սույն ձեռնարկի միջոցով փորձ է արվում բացահայտել երեխայի լավագույն շահերի հասկացությունը, դրանց որոշման չափորոշիչները ընտանեկան վեճերով գործերի քննության փուլում, դատարանների իրավասությունը այդ շահերի բացահայտմանն ուղղված գործողություններ ձեռնարկելիս, ինչպես նաև ընտանեկան վեճերով գործերի քննությանը պարտադիր մասնակցող և եզրակացություն տվող պետական մարմինների իրավասության շրջանակները:

Ձեռնարկում վեր են հանվել նաև առկա խնդիրները և բացթողումները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկներ:

Ձեռնարկում լայնորեն վկայակոչված են քննարկվող ոլորտին առնչվող ՀՀ տարբեր օրենսդրական ակտեր և դրույթներ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ընդհանուր իրավասության դատարանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) դատական ակտերը, ինչպես նաև գիտագործնական հոդվածներ այս թեմայի վերաբերյալ:

4 «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենք, ՀՕ-10-Ն, 1-ին հոդված:

5 Ընդունվել է 09.02.2018թ.-ին, ուժի մեջ է մտել 2018թ. Ապրիլի 9-ից (ՀՕ-110-Ն):

6 17.06.1998թ.-ին ընդունված և 01.01.1999թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (ՀՕ-247) նման կարգավորում չուներ:

©UNICEF Armenia/2020/Avagyan

1 Ի՞նչ է «երեխայի լավագույն շահը»

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

«Երեխայի լավագույն շահը» դինամիկ, բարդ, ընդգրկուն հասկացություն է, որը հնարավոր չէ վերացականորեն և օբյեկտիվ կերպով սահմանել: Այն պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ իրավիճակի, անձնական համատեքստի և երեխայի կարիքների հաշվառմամբ[7]:

ՄԱԿ-ի՝ երեխաների իրավունքների հանձնաժողովը ընդգծում է, որ «երեխայի լավագույն շահը» եռաչափ հասկացություն է՝[8]

ա. Նյութական իրավունք

Երեխան իրավունք ունի, որ նրա լավագույն շահերը գնահատվեն և հաշվի առնվեն նրան վերաբերող բոլոր գործողություններում և որոշումներում: Ավելին՝ այդ իրավունքն առաջնահերթ ուշադրության արժանանալու նախապատվություն ունի:

«Երեխայի լավագույն շահը» առաջին հերթին սահմանադրորեն ամրագրված իրավունք է, որի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

7 Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 12 (2009) on the Right of the Child to be Heard, կետ 2, 32:

8 Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 14 (2013), կետ 6:

բ. Հիմնարար, մեկնաբանելի իրավական սկզբունք

«Երեխայի լավագույն շահը» բարձրացվել է սկզբունքի մակարդակի, ինչը նշանակում է, որ «երեխայի լավագույն շահը» անկյունաքարային սկզբունք է[9], որը ելակետային է երեխայի բոլոր իրավունքների համար: Այն պահանջում է, որ երեխային վերաբերող բոլոր հարցերում «առաջնահերթ ուշադրություն» տրվի երեխայի շահերին:

«Առաջնահերթ ուշադրության արժանացնել» արտահայտությունը նշանակում է, որ երեխային վերաբերող հարցերի մասին որոշում կայացնելու համար կոնկրետ գործում դեր խաղացող և, որպես կանոն, իրարից տարբերվող շահերն իրար հետ համեմատելիս (կշռադատելիս) առաջին հերթին պետք է գնահատվի երեխայի շահը: Նման մոտեցումը արդարացված է այն առանձնահատուկ վիճակով, որում գտնվում է երեխան, մասնավորապես՝ նրա կախվածությունը, խոցելիությունը, հասունության աստիճանը և այլն: Օրինակ երեխայի շահերը պարտադիր չէ, որ համապատասխանեն ծնողների շահերին և կարող են գերակա լինել դրանց նկատմամբ:

Առաջնահերթ ուշադրության արժանացնելու պարտականությունը երեխայի շահերին տալիս է հատուկ կշիռ, բայց դա չի բացառում, որ առանձին դեպքերում գերակայություն կարող է տրվել այլ շահերի: Օրինակ լինում են դեպքեր, երբ երեխայի շահերը հակադրվում են ծնողի շահերին, ապա նմանատիպ դեպքերում անհրաժեշտ է այդ երկու շահերի արդարացի հավասարակշռում ապահովել, բայց նույնիսկ այդ հավասարակշռման պրոցեսում անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել երեխայի լավագույն շահերին:

գ. Ընթացակարգային կանոն

երբ անհրաժեշտ է կայացնել որոշում, որն ազդեցություն է ունենալու կոնկրետ երեխայի, երեխաների սահմանված խմբի կամ ընդհանրապես երեխաների վրա, որոշումների կայացման գործընթացը պետք է ներառի տվյալ երեխայի կամ երեխաների վրա այդ որոշման հնարավոր ազդեցության գնահատումը (դրական կամ բացասական): Երեխայի լավագույն շահերի գնահատումն ու որոշումը պահանջում են ընթացակարգային երաշխիքներ: Բացի այդ, որոշման հիմնավորումը պետք է ցույց տա, որ այդ իրավունքը հստակ հաշվի է առնվել: Այս առումով մասնակից պետությունները պետք է բացատրեն, թե ինչպես է իրականացվել այդ իրավունքը տվյալ որոշման մեջ, այսինքն, թե ի՞նչն է բխում երեխայի լավագույն շահերից, ի՞նչ չափանիշների վրա է այն հիմնված և թե ինչ նշանակություն է տրվում երեխայի շահերին այլ նկատառումների համեմատ, անգամ եթե դրանք առավել ընդգրկուն խնդրահարույց հարցեր են կամ առանձին դեպքեր:

Որպես ընթացակարգային կանոն «երեխայի լավագույն շահը» կարմիր գծի պես անցնում է երեխային վերաբերող բոլոր գործերով և առաջնահերթ ուշադրության պետք է արժանանա թե՛ պետական և թե՛ մասնավոր ոլորտներում երեխային վերաբերող ցանկացած գործողության և որոշման կայացման ժամանակ:

Երեխայի լավագույն շահերը որպես «առաջնահերթություն» պահանջում են գիտակցել, թե ինչ տեղ պետք է գրավեն երեխաների շահերը բոլոր գործողություններում և պատրաստակամ լինել առաջնահերթություն տալ այդ շահերին բոլոր հանգամանքներում, և հատկապես այն ժամանակ, երբ գործողությունն անհերքելիորեն ազդեցություն ունի հարաբերության մասնակից երեխաների վրա:

9 Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 5 (2003) on the General Measures of Implementation of the Convention on the Rights of the Child, կետ 12:

©UNICEF Armenia/2020/Grigoryan

2 «Երեխայի լավագույն շահ» հասկացության ամրագրումը ՀՀ ընտանեկան օրենսգրքում

«Երեխայի լավագույն շահ» հասկացությունը, որպես ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունք, առաջին անգամ փորձ է արվել սահմանել օրենսդրական մակարդակով 21.12.2017թ-ի «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր)»:

Վերլուծելով վերոնշյալ նորմը կարող ենք փաստել, որ «Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն» եզրույթը նպատակ ունի ապահովել իրավունքի իրականացման երաշխիքներ երեխաներին վերաբերող բոլոր որոշումներում և գործողություններում: Սա նշանակում է, որ ցանկացած գործողություն, որը վերաբերում է որևէ երեխայի կամ երեխաների, պետք է հաշվի առնի նրանց լավագույն շահերի առաջնահերթությունը: «Գործողություն» բառը չի ներառում միայն որոշումները, այլև ակտերը, վարքը, առաջարկները, ծառայությունները, ընթացակարգերը և այլ միջոցները:

Սակայն հարկ է ընդգծել, որ «գործողություն» եզրույթը պետք է ավելի լայն մեկնաբանել, մասնավորապես անգործությունը կամ գործողություն չձեռնարկելը և գործողություններից ձեռնպահ մնալը նույնպես «գործողություններ» են, օրինակ, երբ սոցիալական ապահովության մարմինները գործողություններ չեն ձեռնարկում երեխաներին անտեսումից կամ չարաշահումից պաշտպանելու նպատակով:

Այսինքն՝ երեխայի լավագույն շահերից բխող իրավական պարտականությունը վերաբերում է բոլոր որոշումներին և գործողություններին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են կամ կարող են ազդել երեխաների վրա:

Հետևաբար, «Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն» եզրույթը պետք է հասկացվի շատ լայն իմաստով:

Հարկ է նկատել, որ սույն հոդվածում ամրագրված պարտավորությունները վերաբերում են բոլորին՝ ինչպես երեխաների վերաբերյալ որոշումներ կայացնող պետական և մասնավոր մարմիններին ու կազմակերպություններին, դատարաններին, այնպես էլ երեխաների վերաբերյալ առօրյա որոշումներ կայացնող սուբյեկտներին (օրինակ՝ ծնողները, խնամակալները, ուսուցիչները և այլն):

Վերոնշյալ հոդվածն ընդգծում է նաև «երեխայի լավագույն շահերի» ապահովման նպատակը:

Մասնավորապես այն փորձում է երաշխավորել երեխայի լավագույն շահերի կիրառումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացման գործընթացում:

Բացի այդ «երեխայի լավագույն շահերի» ապահովման կարևորագույն նպատակը և նշանակետը նաև երեխայի զարգացումն է, որն ընդգրկում է երեխայի ֆիզիկական, հուզական, ճանաչողական և սոցիալական զարգացումը: Այսինքն՝ «երեխայի լավագույն շահի» ապահովման նպատակով պետք է բացահայտել

երեխայի հասունության աստիճանը՝ հաշվի առնելով, որ երեխան ժամանակի ընթացքում զարգանում է:

Միևնույն ժամանակ, «երեխայի լավագույն շահը» ամրագրված է նաև որպես առաջնահերթ սկզբունք: Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 8-րդ մասի համաձայն՝

«Եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել, ապա այն կիրառելիս առաջնահերթ հաշվի են առնվում Երեխայի լավագույն շահերը»:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ երեխաներին վերաբերող հարցերում իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման դեպքում, «եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել», ապա «երեխայի լավագույն շահը» առաջնահերթության նախապատվություն ունի:

©UNICEF Armenia/2021/Margaryan

3 «Երեխայի լավագույն շահ» հասկացության մեկնաբանությունը դատական պրակտիկայում

Մինչ օրենսդրական համապատասխան փոփոխությունները ՀՀ դատական պրակտիկան փորձել է մեկնաբանել և սահմանել «երեխայի շահ» հասկացությունը, ընդլայնելով դրա բովանդակությունն այնպես, որ նույնացվի «երեխայի լավագույն շահ» հասկացությանը:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 05.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-919 որոշմամբ գտել է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել, և դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև՝ դատական պրակտիկայում: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք է: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ ևս արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը[10]:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ ՀՀ ներպետական ընտանեկան օրենսդրությամբ, թե՛ միջազգային իրավական ակտերում «երեխայի լավագույն շահ» հասկացության բովանդակությունը հստակեցված չէ. նշված հասկացության բովանդակությունը ենթակա է բացահայտման իրավակիրառ (հատկապես՝ դատական) պրակտիկայի շրջանակներում:

Մարգարիտ Հովհաննիսյանի վերաբերյալ 01.04.2011թ. թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթացում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության համար անհրաժեշտ հոգատարությամբ:

Զարգացնելով վերոնշյալ մոտեցումը և ելնելով իրավունքի միատեսակ կիրառման և նախադեպային իրավունք ստեղծելու իր գործառնությունից Վճռաբեկ դատարանն իր ԵԱՆԴ/4073/02/14 քաղաքացիական գործով կայացրած 22.07.2016թ որոշմամբ արձանագրել է, որ «երեխայի շահ» կամ «երեխայի լավագույն շահեր» հասկացություններն իրավակիրառ պրակտիկայում պետք է ընկալվեն ու կիրառվեն հետևյալ երեք իմաստներով.

10 Տ՛ս Անի Մարտիրոսյանն ընդդեմ Գուրգեն Խալաթյանի թիվ ԵԱՔԴ/0474/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշում:

ա. որպես երեխայի իրավունք.
երեխան ունի իր լավագույն շահերի բացահայտման և դրանց առաջնային նշանակության տրամադրման իրավունք այն դեպքում, երբ իրավասու մարմնի կողմից կայացվող որոշումն առնչվում է երեխայի և այլ անձանց իրավունքներին ու շահերին, և առկա է դրանց հավասարակշռման անհրաժեշտություն,

բ. որպես իրավական-մեկնաբանողական սկզբունք.
երեխայի իրավական վիճակին առնչվող տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք տվող ցանկացած իրավական նորմ պետք է մեկնաբանվի և կիրառվի՝ ելնելով երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նկատառումից,

գ. որպես ընթացակարգային կարգավորման կանոն.
երեխային առնչվող որոշումների ընդունման ընթացքում պետք բացահայտվի նաև երեխայի իրավունքների և շահերի վրա այդ որոշման հնարավոր ազդեցությունը:

Անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Եվրոպական դատարանը ևս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ երեխայի լավագույն շահը չի կարող որոշվել ընդհանուր բնույթի իրավական դատողությունների միջոցով և կախված է յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից՝ հիմք ընդունելով երեխայի շահերի առաջնայնությունը[11]:

11 Տե՛ս, Schneider v. Germany գործով Եվրոպական դատարանի 15.09.2011 թվականի վճիռը, 100-րդ կետ:

©UNICEF Armenia/2021/Margaryan

4 «Երեխայի լավագույն շահերը» գնահատելու և որոշելու տարրերը, ընդհանուր մոտեցումներ

Երեխայի լավագույն շահերի գնահատումը առանձնահատուկ գործունեություն է, որը պետք է նախաձեռնվի յուրաքանչյուր առանձին դեպքում, յուրաքանչյուր երեխայի կամ երեխաների խմբի կամ ընդհանրապես երեխաների համար որոշակի հանգամանքների լույսի ներքո: Այս հանգամանքները վերաբերում են խնդրո առարկա երեխայի կամ երեխաների անհատական բնույթին, ինչպիսիք են, ի թիվս այլնի, տարիքը, սեռը, հասունության աստիճանը, փորձը, փոքրամասնության խմբի պատկանելությունը, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունենալը, ինչպես նաև սոցիալական և մշակութային համատեսքտը, որում երեխան կամ երեխաները հայտնվում են, ինչպես՝ ծնողների առկայությունը կամ բացակայությունը, արդյոք երեխան ապրում է նրանց հետ, երեխայի և նրա ընտանիքի կամ խնամակալների միջև փոխհարաբերությունների որակը, միջավայրի անվտանգության մակարդակը, ընտանիքի, ընդլայնված ընտանիքի կամ խնամակալների համար մատչելի այլընտրանքային խնամքի որակյալ միջոցները և այլն:

Նախ նշենք, որ Երեխայի լավագույն շահերի գնահատումն ու որոշումը երկու քայլ են, որոնց անհրաժեշտ է հետևել որոշում կայացնելիս: «Լավագույն շահերի գնահատումը» ներառում է բոլոր տարրերի գնահատում և հավասարակշռում, որոնք անհրաժեշտ են որոշակի իրավիճակում որոշակի անհատ երեխայի կամ երեխաների խմբի համար որոշում կայացնելու համար: Դա իրականացվում է որոշում կայացնողի և նրա աշխատակազմի կողմից, հնարավորության դեպքում բազմառարկայական (բազմամասնագիտական) խմբի կողմից, և պահանջում է երեխայի մասնակցությունը: «Լավագույն շահերի որոշումը» ենթադրում է ֆորմալ գործընթաց ընթացակարգային խիստ երաշխիքներով, որոնք նախատեսված են որոշելու երեխայի լավագույն շահերը՝ լավագույն շահերի գնահատման հիման վրա: Այլ կերպ ասած՝ «լավագույն շահերի որոշումը» կոնկրետ գործով այն վերջնական արդյունքն է, որին հանգում է համապատասխան մարմինը կատարած բազմակողմանի և օբյեկտիվ վերլուծությունների հիման վրա:

ՄԱԿ-ի՝ երեխաների իրավունքների հանձնաժողովը վեր է հանել «երեխայի լավագույն շահերը» գնահատելու որոշակի տարրեր[12], ինչպիսիք են, մասնավորապես, երեխայի կարծիքը, երեխայի ինքնությունը (այդ թվում՝ տարիքը, սեռը, անձնական պատմությունը), ընտանեկան միջավայրի և հարաբերությունների պահպանումը, երեխայի խնամքը, պաշտպանությունը և անվտանգությունը, խոցելիության իրավիճակները, երեխայի առողջության, կրթության իրավունքները:

Հարկ է ընդգծել, որ ներկայիս ՀՀ ընտանեկան օրենսգրքով ևս սահմանվել են գրեթե նույնական չափանիշներ, որպես երեխայի լավագույն շահերը գնահատելու և որոշելու տարրեր:

Մասնավորապես երեխայի լավագույն շահերը որոշելու տարրերն են՝

- երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները,
- այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը,
- ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը,
- երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը,
- ազգային պատկանելության հարցը,
- երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում,
- այլ կարիքները, պահանջները և շահերը:

12 Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 14 (2013), կետ 52-79:

Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ տարրերն ու չափանիշները սպառիչ չեն և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանները կարող են հաշվի առնել և գնահատման արժանացնել նաև այլ պայմաններ, եթե այդպիսք կան:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Եվրոպական դատարանը ևս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից[13]:

©UNICEF Armenia/2020/Grigoryan

13 Տե՛ս, «Ս.»-ն ընդդեմ Ֆինլանդիայի գործով Եվրոպական դատարանի 09.05.2006 թվականի վճիռը, 52-րդ և 53-րդ կետեր:

©UNICEF Armenia/2021/Galstyan

5 «Երեխայի լավագույն շահերի» որոշման չափանիշները երեխայի խնամքի, դաստիարակության և երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ դատական վեճերով

Ինչպես արդեն նշեցինք, երեխայի լավագույն շահերը բացահայտելիս յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է դրսևորել առանձնահատուկ մոտեցում, վեր հանել և բացահայտել երեխայի համար լավագույն շահերի ապահովման առաջնահերթությունները:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի թիվս վերոնշյալ պայմանների դատարանները կոնկրետ գործերով առանձնացրել են նաև մի շարք այլ պայմաններ և չափորոշիչներ «երեխայի լավագույն շահերի» բացահայտման նպատակով:

ՀՀ սահմանադրական դատարանը 05.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-919 որոշմամբ գտել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Հետևաբար ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Նույն այդ որոշման մեջ Սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված «երեխաների շահերից» արտահայտությունը, որոշել է, որ ծնողների ամուսնալուծության դեպքում երեխայի բնակվելու վայրի վերաբերյալ համաձայնության բացակայության պարագայում դատարանների համար գերակա պայման պետք է հանդիսանա «երեխայի լավագույն շահը» և եթե երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերի հետ, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով[14]:

Հատկանշական է, որ սահմանադրական դատարանը համադրել է երեխայի կարևորագույն իրավունքն ու շահը, այն է՝ կարծիք հայտնելու իրավունքը և երեխայի շահը, և արդյունքում եզրահանգել է, որ բոլոր դեպքերում առաջնությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահին՝ որպես գերակա պայմանի:

Ստորև ներկայացնում ենք նաև Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, որտեղ բարձրաձայնվել են երեխայի լավագույն շահերը որոշելիս ուշադրության արժանի հանգամանքներ:

Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանը իր՝ ըստ հայցի Արա Միրզախանյանի ընդդեմ Դիանա Խաչատրյանի՝ անչափահաս երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու պահանջի մասին 2007 թվականի մարտի 30-ի թիվ 3-432 (ՏԴ)քաղաքացիական գործով նշել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը ծնողների համաձայնության բացակայության դեպքում որոշելիս դատարանը պետք է համեմատական գնահատական տա և պատճառաբանի թե որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի շահերից և նպաստում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը[15]:

Նույն այդ գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով երեխայի խնամքի հարցի լուծման հապաղումը չի բխի երեխայի լավագույն շահերից և հետևաբար՝ արդարադատության արդյունավետության շահերից[16]:

14 Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-919 որոշումը:

15 Նույն մոտեցումն արտացոլվել է նաև 10.02.2012թ. թիվ ԵԿԴ/1314/02/10 վճռում:

16 Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի մարտի 30 թիվ 3-432 (ՏԴ) քաղաքացիական գործով որոշումը:

Այսինքն, կարող ենք փաստել, որ վերոնշյալ դիրքորոշումներով դատարանների առաջ լրացուցիչ պահանջ է դրվել, այն է՝ պարզել, թե որ ծնողի մոտ գտնվելը կբխի երեխայի լավագույն շահից, անկախ այն հանգամանքից, թե ով է տվյալ գործով հայցվորը և որ ամենակարևորն է՝ ամրագրվել է մի մոտեցում, համաձայն որի՝ երեխայի խնամքի հարցի լուծման հապաղումը չի բխում երեխայի լավագույն շահերից, այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է երեխայի խնամքի գործերով հնարավորինս կարճ ժամկետներում դատական քննության անհրաժեշտությունը:

Մեկ այլ նախադեպային որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ երեխայից առանձին բնակվող ծնողի ծնողական իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ ծնողին առնչվող ուշադրության արժանի հանգամանքները, եթե դրանք հաշվի առնելը չի հակասում երեխայի լավագույն շահերին[17]:

Նշված նախադեպի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառձել է հետևյալ իրավական հարցադրմանը. շաբաթվա հանգստյան օրերին երեխայի՝ միայն իրենից առանձին ապրող ծնողի հետ տեսակցության կարգի սահմանումը բխո՞ւմ է արդյոք երեխայի լավագույն շահերից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բոլոր հանգստյան օրերին երեխայի գտնվելը մոր մոտ, իսկ աշխատանքային օրերին՝ միայն հոր մոտ, առերևույթ չի բխում երեխայի լավագույն շահերից, քանի որ երեխայի հոգեկան, հոգևոր ու ֆիզիկական առողջ զարգացման համար անհրաժեշտ է, որ վերջինս հանգստյան օրերին բացառապես չգտնվի ծնողներից մեկի մոտ՝ մշտապես զրկված լինելով մյուս ծնողի ներկայությունից: Այս առումով Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ ինչպես երեխան, այնպես էլ նրանից առանձին ապրող ծնողն ունեն միմյանց հետ արդյունավետ շփվելու իրավունք, սակայն ծնողի այդ իրավունքը կարող է սահմանափակվել այն դեպքում, երբ դրա իրականացումը հակասում է երեխայի լավագույն շահերին:

Ակնհայտ է, որ նշված նախադեպով Վճռաբեկ դատարանն ընդգծել է «ծնողական իրավունքների արդյունավետ իրացման» և «երեխայի լավագույն շահերը» իրավունքների արդյունավետ համադրման անհրաժեշտությունը, որը ենթադրում է, որ այդ համատեքստում պետք է առաջնությունը տալ երեխայի լավագույն շահերին՝ պահպանելով հավասարկշռված մոտեցում և չոտնահարելով կամ անհարկի չսահմանափակելով ծնողների երեխայի հետ շփվելու հավասար իրավունքները:

Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում է արձանագրել այն դեպքում, երբ տեսակցության կարգ սահմանելիս հաշվի չի առնվել ամուսնալուծված և երեխայից առանձին բնակվող հոր ուշադրության արժանի այնպիսի անձնական հանգամանքը, ինչպիսին է վերջինիս աշխատանքային գրաֆիկը, որը խոչընդոտել է ըստ սահմանված տեսակցության կարգի երեխայի հետ շփվելուն և հորը զրկել է իր երեխային արդյունավետ տեսակցելու հնարավորությունից[18]:

Ծնողական իրավունքների սահմանափակման հավասարակշռված մոտեցման օրինակ է առկա նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.03.2008թ-ին թիվ 3-237/ՎԴ-2008թ. քաղաքացիական գործով կայացված որոշմամբ, ըստ հայցի՝ Արմեն Միքայելյանի ընդդեմ Հայաստանի Կառավարության՝ երեխաների տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին, երբ Վճռաբեկ դատարանը պատճառաբանել և եզրակացրել է, որ երեխայի տեսակցությունը Հայաստանի Կառավարության տանն իրականացնելն անհարկի սահմանափակում է հոր ծնողական իրավունքները և չի բխում երեխայի շահերից:

Այսինքն՝ սույն գործով Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ երեխայի տեսակցությունը միշտ չէ, որ պետք է լինի մոր տանը կամ վերջինիս ներկայությամբ, քանի որ նման մոտեցումը կարող է անհարկի սահմանափակել հոր ծնողական իրավունքները և չբխել երեխայի լավագույն շահերից, մինչդեռ հենց երեխայի լավագույն շահերից է բխում ծնողների հետ արդյունավետ տեսակցելու հնարավորության ապահովումը:

Նշվածի հետ կապված հարկ է անդրադառնալ նաև Սահինն ընդդեմ Գերմանիայի Եվրոպական դատարանում լսված գործին: Չնայած 2003թ. հուլիսի 8-ի վճռով Բարձր դատարանը գտել է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել ձայների 12 ընդդեմ 5 հարաբերակցությամբ, այլ տեղի է ունեցել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված խախտում, այնուամենայնիվ, նույն վճռով, դատավոր Ռոզակիսը և Թուլկենսը մասնակի չհամընկնող միասնական հատուկ կարծիք են արտահայտել, որում նշել են, որ երբ երեխայի հինգ տարին դեռ լրացած չէ կամ նոր է լրացել, դյուրորեն կարելի է ենթադրել, որ այդ տարիքում երեխան դեռևս ենթակա է եղել իր կյանքի ճկուն ընտելացման, ներառյալ չեզոք

17 Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ ՍԴ3/0139/02/15 քաղաքացիական գործով որոշումը:

18 Տե՛ս, Gluhaković v. Croatia գործով Եվրոպական դատարանի 12.04.2011 թվականի վճիռը:

միջավայրում իր մոր կամ հոր հետ պարբերական շփման:

Այստեղ խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ որոշ դեպքերում երեխաներին տեսակցելը կողմերի լարված հարաբերությունների արդյունքում կարող է վերածվել վեճի ու անհամաձայնության, որի արդյունքում ծնողը չի կարողանա լիարժեք շփվել իր երեխայի հետ, ինչը և կստեղծի նյարդայինմթնոլորտ, որին կարող են ականատես լինել երեխանները, իսկ նման հանգամանքն ընդհանրապես չի բխում երեխաների լավագույն շահերից և կարող է բացասական ազդեցություն ունենալ ու առաջացնել բացասական հետևանքներ թե երեխաների և թե ծնողների համար, ինչի արդյունքում ոչ միայն չեն պաշտպանվի երեխաների շահերը, այլև դրանք ընդհանրապես կխախտվեն, ինչպես նաև փաստորեն չեն իրականացվի երեխայի և ծնողի՝ միմյանց հետ պատշաճ տեսակցելու և շփվելու իրավունքները, ուստի նման պարագայում դատարանի դիրքորոշումը պետք է կախված լինի առաջին հերթին երեխայի լավագույն շահերից և վերջինիս շահերի և իրավունքների պաշտպանությունից, ինչպես նաև կոնկրետ գործի հանգամանքներից և բարդություններից:

2011 թվականի հուլիսի 1-ի թիվ ԵԱՔԴ/1688/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում, ամուսնալուծությունից հետո ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում (տվյալ դեպքում տարբեր պետություններում) Դատարանն իրավունք ուներ երեխայի ապրելու վայրը որոշել երկու տարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիրակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը չէր կարող երեխայի ապրելու վայրը որոշել երկու տարբեր երկրներում գտնվող ծնողների մոտ՝ առաջնորդվելով միայն ծնողներից մեկի՝ երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ, առանց հաշվի առնելու երեխայի լավագույն շահը:

Հատկանշական է, որ նշված գործով Վճռաբեկ դատարանը «երեխայի լավագույն շահերը» բացահայտելու և որոշելու պայմանների շարքում առանձնացրել է հետևյալ հանգամանքները՝

- ծնողների կողմից նախապես որոշված երեխայի բնակության վայրը,
- երեխայի տարիքը,
- կրթության վայրը,
- համապատասխան երկրի և այդտեղ բնակվող ծնողի հետ երեխայի կապվածությունը,
- երեխայի ապրելու վայրի պարբերաբար փոփոխության հնարավոր բացասական հետևանքները երեխայի հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման և դաստիարակության վրա[19]:

Իսկ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵՄԴ/0124/02/12 քաղաքացիակն գործով Վճռաբեկ դատարանը անդրադառձել է հետևյալ իրավական հարցադրմանը. իրավաչափ է արդյո՞ք ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ քաղաքացիական գործի քննության ընթացքում դատարանի կողմից երեխայի՝ ծնողներից մեկի հետ ունեցած կապվածությունը որպես երեխայի լավագույն շահերի բացահայտման միակ չափանիշ դիտարկելը:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ պայմանները.

- երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ,
- երեխայի տարիքը,
- ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները,
- ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները,
- երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս

19 Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 1-ի թիվ ԵԱՔԴ/1688/02/08 քաղաքացիական գործով որոշումը:

դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի մյուս բոլոր պայմանները: Երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը[20]:

Այլ կերպ ասած՝ դատարանը չի կարող ընդհանուր իրավական դատողությունների միջոցով բացահայտել երեխայի լավագույն շահերն ու սահմանվող միջոցի ազդեցությունը դրանց վրա, այլ պետք է յուրաքանչյուր գործով հավասարակշռի ծնողի իրավունքներն ու անձնական հանգամանքները և երեխայի լավագույն շահերը, մասնավորապես՝ պարզի, թե արդյոք ծնողական իրավունքի իրականացման սահմանվող եղանակը բացասական ազդեցություն կունենա երեխայի հոգեկան, հոգևոր ու բարոյական զարգացման և դաստիարակության վրա, թե՝ ոչ[21]:

Վճռաբեկ դատարանի նշված որոշումներով ըստ էության փորձ է արվել ապահովել «երեխայի լավագույն շահ» կոնվենցիոն սկզբունքի միասնական կիրառությունը կոնկրետ իրավահարաբերության նկատմամբ, այն է՝ երեխայի բնակության վայրը որոշելիս: Դա հենց այն մոտեցումն է, որը համապատասխանում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի 2013 թվականի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությանը (այսուհետ նաև՝ թիվ 14 Ընդհանուր մեկնաբանություն)[22]:

Վճռաբեկ դատարանի այդ մոտեցումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական չափանիշներից:

Այդուհանդերձ, դատական ակտերի ուսումասիրությունը ցույց է տալիս, որ դատավորները թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության սկզբունքները համակարգված կերպով չեն կիրառում, այսինքն բացակայում է միասնական դատական պրակտիկա, թե ինչպես պետք է որոշել երեխայի լավագույն շահը տվյալ հանգամանքների ներքո: Դա պայմանավորված է, ի թիվս այլ հանգամանքների, նաև ուղեցույցային փաստաթղթերի, կամ այսպես կոչված «փափուկ օրենքների» բացակայությամբ:

20 Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵՄԴ/0124/02/12 քաղաքացիական գործով որոշումը:

21 Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ ՍԴ3/0139/02/15 քաղաքացիական գործով որոշումը:

22 Տե՛ս UN Committee on the Rights of the Children, General Comment № 14 (2013):

©UNICEF Armenia/2021/Mahari

6 Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերով որպես «երեխայի լավագույն շահերի» բացահայտումն իրականացնող կարևոր և պարտադիր սուբյեկտներ

Երեխաների խնամքի, դաստիարակության, բնակության վայրը որոշելու և օրենքով նախատեսված մի շարք դեպքերում դատական վեճերն իրականացվում են բացառապես խնամակալության և հոգաբարձության մարմինների պարտադիր մասնակցությամբ:

Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեությունը կարգավորվում է «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ թիվ 631-Ն որոշում):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

Թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ Խնամակալության և հոգաբարձության մարմինները Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարան են ներկայացնում երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի հետազոտության ակտը և դրա հիման վրա՝ վեճի էության մասին եզրակացությունը:

Վերոնշյալ նորմերի տառացի նշանակությամբ մեկնաբանությունից հետևում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը դատարանին ներկայացնում է երկու փաստաթուղթ, այն է՝ հետազոտության ակտը և վեճի էության մասին եզրակացությունը:

2016 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ ՍԴ3/0139/02/15 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի բացահայտման գործում կարևոր նշանակություն ունի երեխայի դաստիարակության վերաբերյալ գործերով խնամակալության և հոգաբարձության մարմնին դատավարությանը մասնակից դարձնելը: (...) Թեև խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը դատարանի համար կրում է մասնագիտական-խորհրդատվական բնույթ, և դատարանն այն պարտավոր է գնահատել գործում առկա այլ ապացույցների հետ համակցության մեջ, այնուամենայնիվ, նմանատիպ գործերով վերոնշյալ եզրակացության առկայությունը պարտադիր է, քանի որ դրանում արտահայտված փաստարկները գործում առկա մյուս ապացույցների հետ համադրության արդյունքում դատարանին հնարավորություն են ընձեռում կոնկրետ գործով պարզելու երեխայի լավագույն շահը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ թեև երեխայի դաստիարակության հետ կապված գործերով խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության առկայությունը պարտադիր է և այն կրում է մասնագիտական բնույթ, այնուամենայնիվ, դատարանը չպետք է սահմանափակվի միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության մեջ նշված դրույթները կրկնելով, այլ պետք է հավաստիանա դրանց հիմնավորվածության մեջ և այն համեմատի գործով ձեռք բերված մյուս ապացույցների հետ, որից հետո միայն, հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը, որոշի ներկայացված հայցապահանջների մերժման

կամ բավարարման հարցը[23]:

2012 թվականի մարտի 23-ի թիվ ԵԱՔԴ/0474/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանն առաջ է քաշել և պատասխանել է հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացրած հետազոտության ակտը, որն անցկացվել է առանց երեխայի և նրա դաստիարակությանը հավակնող ծնողներից մեկի կյանքի հետազոտության, կարող է դատարանի կողմից գնահատվել որպես վեճի լուծման համար պատշաճ ապացույց:

Նշված հարցադրման շրջաննակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը օրենքով սահմանված կարգով պարտավոր է անցկացնել թե՛ երեխայի և թե՛ այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը: Վերոնշյալից հետևում է, որ եթե երեխայի դաստիրակությանը հավակնում են մի քանի անձ, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել նշված բոլոր անձանց կյանքի հետազոտություն և դատարան ներկայացնել հետազոտության ակտը ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը:

Նշված նախադեպով Վճռաբեկ դատարանը փորձ է արել ընդլայնել խնամակալության և հոգաբարձության մարմնի հետազոտությանը շրջնակները՝ ներառելով բոլոր այն անձանց, ովքեր հավակնում են երեխայի դաստիարակությանը:

Սակայն պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնամակլության և հոգաբարձության մարմինը շատ հաճախ սահմանափակվում է միայն մեկ կողմի (հաճախ միայն հայցվոր կողմի) կյանքի հետազոտությունը:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները և դրանց կից գործող հանձնաժողովները իրենց գործառույթներն իրականացնելիս և դրանց առումով կայացրած իրենց եզրակացություններում որպես կանոն վկայակոչում են «երեխայի լավագույն շահի» իրավունքը, դրա հիմքում ընկած ներպետական և միջազգային նորմերը (այդ թվում նաև «Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիային» և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիային»):

Այդուհանդերձ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման հղումները մեծամասամբ արվում են ձևական կերպով՝ առանց կիրառելու Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության սահմանված տարրերը, որոնցով էլ պետք է որոշվի տվյալ իրավիճակում երեխայի լավագույն շահի շրջանակը, առկայությունը կամ բացակայությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո: Արդյունքում, եզրակացությունները հաճախ առաջարկում են ավանդական լուծումեր, օրինակ՝ հաշվի առնելով երեխայի ծնողի, այլ ոչ թե երեխայի շահը:

Բացի այդ, թիվ 631-Ն որոշման համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են: Երևանում խնամակալության և հոգաբարձության մարմնին վերապահված լիազորությունները քաղաքապետի անունից իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները, իսկ նշված պաշտոնատար անձանց համար համապատասխան մասնագիտացում ունենալու օրենսդրական որևէ պահանջ չկա:

Ինչ վերաբերում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ապա պետք է նշել, որ Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ և այդ անձինք կարող են լինել մարզպետարանների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ)[24]:

Ակնհայտ է, որ օրենսդրական նման ձևակերպումը չի բխում «երեխայի լավագույն շահերի» բացահայտման ապահովումից, քանի որ հնարավորություն է տալիս ձևավորել օրինակ մի Հանձնաժողով, որը կազմված կլինի երեք անձից, ովքեր միայն իրավաբաններ են: Մինչդեռ ակնհայտ է, որ երեխայի շահերի բացահայտման համար անհրաժեշտ է Հանձնաժողովում ներառել

23 Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ ՍԴ3/0139/02/15 քաղաքացիական գործով որոշումը:

24 Տե՛ս, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի n 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության
2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 11-14 կետերը:

ոչ միայն իրավաբանների, այլև հոգեբանների և մանկավարժների և դա պետք է լինի պարտադիր, այլ ոչ թե հայեցողական պահանջ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնամակալության մարմինները և հանձնաժողովի անդամները չունեն համապատասխան մասնագիտացում ու փորձ, չեն տիրապետում ուղղորդման մեխանիզմներին, չունեն մեթոդական գրականություն, օրինակ՝ ուղեցույցներ, որոշելու համար երեխայի լավագույն շահերը տվյալ հանգամանքների ներքո, կամ ձևաթղթեր, հարցաթերթիկներ, որոնք անհրաժեշտ են խնամակալության հանձնաժողովի անդամի կողմից հետազոտություն կատարելիս: 2017 թվականի հունվարի 31-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հաստատել է «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որը սահմանում է ուղեցույցներ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ կապված մի շարք գործողությունների իրականացման վերաբերյալ, օրինակ՝ նրանց հայտնաբերման, հաշվառման, տեղավորման, խնամակալության և հոգաբարձության, և այլ գործառույթների մասին:

Այդուհանդերձ, ուղեցույցը թեև նշում է, որ երեխայի վերաբերյալ ցանկացած հարց քննելիս կամ որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի լավագույն շահը, սակայն չի տրամադրում մեթոդական ցուցումներ, թե ինչպես որոշել այն: Թեև խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն ստանում են ՀՀ մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից, սակայն միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել բազմաթիվ այլ գործոններ, որոնք ազդում են խնամակալության մարմինների աշխատանքի որակի վրա՝ դրանք որպես կանոն գործում են տեղական ինքնակառավարման մարմինների ներսում, անվճար, հասարակական հիմունքներով, չունեն համապատասխան ռեսուրսներ և ընթացակարգեր, և այդ պատճառով ՏԻՄ մարմինները որպես կանոն օգտագործում են իրենց ներքին ռեսուրսը հանձնաժողովներ կազմավորելու համար, որի արդյունքում հանձնաժողովներում ներգրավված չեն երեխայի պաշտպանության ոլորտի վերապատրաստված և որակավորված մասնագետներ[25]:

Հարկ է նաև նշել, որ թե օրենքի և թե Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված է, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացությունը մասնագիտական-խորհրդատվական բնույթ ունեցող ապացույց է, սակայն դատարանները հիմնականում վեճը լուծում են հիմք ընդունելով նշված եզրակացությունը:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության փոփոխված օրենսգիրքը դատարաններին ընտանեկան վեճերով գործեր քննելիս տվել է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“ex officio”) պարզելու հնարավորություն: Ավելին՝ օրենսդիրը սահմանել է, որ երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, ինչը նշանակում է, որ դատարանները «երեխայի լավագույն շահերի» բացահայտման համար պարտավոր են սեփական նախաձեռնությամբ, ներգրավել մանկավարժներ, հոգեբաններ, նշանակել տարատեսակ փորձաքննություններ և չսահմանափակվել միայն խնամակալության և հոգաբարձության մարմնի շատ հաճախ միակողմանի և սուբյեկտիվ եզրակացությամբ:

Հատկանշական է, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից դատարանին տրամադրվող հետազոտության ակտի և եզրակացության վիճարկման առանձին ընթացակարգ նախատեսված չէ, դատավարության մասնակիցները կարող են վիճարկել են այն բացառապես դատական գործի քննության ընթացքում:

25 Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով
և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցը:

©UNICEF Armenia/2021/Galstyan

7 Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դերն ու գործառույթները երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերով

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները մասնակցում են կատարողական գործողությունների իրականացմանը՝

ա. երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողություններն իրականացնելիս.

բ. երեխայի տեսակցության հետ առնչվող կատարողական գործողություններ իրականացնելիս՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում:

Վերոնշյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողություններ իրականացնելիս խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է, մինչդեռ տեսակցության հետ առնչվող կատարողական գործողություններ իրականացնելիս՝ ոչ և կախված է դրա անհրաժեշտությունից:

Տվյալ դեպքում հարկ է ընդգծել, որ լինում են դեպքեր, երբ դատարանի կայացրած որոշումը թեև բխում է երեխայի լավագույն շահերից, սակայն հակասում է երեխայի կարծիքին և ցանկությանը: Նման իրավիճակներում դատական ակտի հարկադիր կատարումը պետք է իրականացվի բացառապես հոգեբանի կամ մանկավարժի մասնակցությամբ, ովքեր համապատասխան աշխատանք պետք է իրականացնեն երեխայի հետ, հակառակ դեպքում երեխային բռնությամբ, իր կամքին հակառակ, դատարանի վճռով որոշված ծնողի խնամքին հանձնելը կամ տեսակցություն իրականացնելը ևս կհակասի երեխայի լավագույն շահերին:

Նմանատիպ իրավիճակ է նկարագրված ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0264/02/11 քաղաքացիական գործով 2011 թվականի դեկտեմբերի 27-ին կայացված որոշմամբ: Մասնավորապես, նշված նախադեպային որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածով օրենսդիրն ամրագրել է երեխայի իրավունքն իր շահերը շոշափող ցանկացած հարցի լուծման դեպքում ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքն ինչպես ընտանիքում, այնպես էլ դատական և այլ մարմիններում: Ընդ որում, տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում: Հատկանշական է, որ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ:

Այդուհանդերձ նշված գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը տվյալ պարագայում տասը տարին լրացած երեխաների կարծիքը հաշվի առնելու

հիմքով վերջիններիս խնամակալությունը հարազատներին հանձնելու պայմաններում ըստ էության, խախտել է ծնողի՝ այլ անձանց հանդեպ երեխային դաստիարակելու նախապատվության, երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար հոգ տանելու իրավունքները և պարտականությունները:

Նշված նախադեպի ուսումնասիրությունից հետևում է, որ մի դեպքում Վճռաբեկ դատարանն ընդգծել է երեխայի լսված լինելու, կարծիք արտահայտելու իրավունքների կարևորությունն ու անհրաժեշտությունը, մյուս դեպքում՝ ծնողի՝ այլ անձանց հանդեպ երեխային դաստիարակելու նախապատվության իրավունքը և արդյունքում, գնահատելով և համադրելով նշված իրավունքները երեխայի լավագույն շահերի տեսանկյունից, առաջնայնություն է տրվել ծնողի իրավունքներին և շահերին:

Դատական ակտի հարկադիր կատարման փուլում վերոնշված իրավիճակներում խնդիրներից խուսափելու համար հոգեբան և/կամ մանկավարժ ներգրավելուց բացի օրենսդիրը հնարավորություն է ընձեռել նաև հետաձգել կամ տարաժամկետել դատական ակտի կատարումը, ինչպես նաև փոփոխել դրա կատարման եղանակը և կարգը:

Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական գործողությունները հետաձգվում են կատարողական գործողությունների իրականացումն արգելակող հանգամանքների առկայության դեպքում մինչև այդ հանգամանքների վերանալը՝

1. հարկադիր կատարողի նախաձեռնությամբ կամ կողմերի դիմումի հիման վրա՝ ոչ ավելի, քան մեկ անգամ, մինչև երկու շաբաթ ժամկետով.

2. դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքի 22 հոդվածով սահմանված կարգով, (...).

Ընդ որում, բացի դատարանի միջոցով կատարումը հետաձգելու հնարավորությունց, օրենսդիրը մեկ անգամ կատարողական գործողությունները հարկադիր կատարողի որոշմամբ հետաձգելու հնարավորություն էլ է նախատեսել, թեկուզև կարճ ժամկետով, այն է՝ երկու շաբաթով:

Այդուհանդերձ, նշված ժամանակահատվածը ևս կարող է բավարար լինել երեխայի հետ համապատասխան մասնագետների կողմից նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու համար:

Ամեն դեպքում, պետք է նկատի ունենալով, որ ցանկացած գործողություն, նույնսիկ, եթե այն որոշված է դատարանի օրինական ուժի մեջ մտավ դատական ակտով, չի կարող իրականացվել երեխայի լավագույն շահերը ոտնահարելու հաշվին:

8 Խորհուրդներ փաստաբաններին. Ինչ կարելի է անել երեխայի խնամքի, դաստիարակության և երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ դատական վեճերով «երեխայի լավագույն շահերի» ապահովման համար

Նկատի ունենալով, որ դեռևս դատարանները խուսափում են ի պաշտոնե քննել ընտանեկան վեճերով գործերը և սեփական նախաձեռնությամբ կատարել համապատասխան գործողություններ «երեխայի լավագույն շահերի» բացահայտման համար, ուստի դատավարության մյուս մասնակիցները, այդ թվում փաստաբանները, պետք է լինեն առավել ակտիվ և օգտվեն օրենքով իրենց տրված բոլոր հնարավորություններից կոնկրետ գործի շրջանակներում «երեխայի լավագույն շահերը» բացահայտելու և դրանց առաջնայնություն տալու հարցում:

Ներկայիս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը տրամադրում է մի շարք գործիքներ, որոնց միջոցով կարող ենք հասնել «երեխայի լավագույն շահերի» ոչ միայն բացահայտմանը, այլև դատավարության ընթացքում՝ դրանց ապահովմանը:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման:

Այսինքն՝ դատավարության ցանկացած փուլում կարող ենք միջնորդել կիրառել հայցի ապահում՝ թեկուզև այն առերևույթ կարող է հանգեցնել ներկայացված պահանջի փաստացի կատարման, եթե առկա է երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտություն: Նմանատիպ իրավիճակ կարող է առկա լինել, օրինակ երեխայի տեսակցության վեճերի ժամանակ, երբ միչև վերջնական դատական ակտի կայացումը անհրաժեշտ է ապահովել ծնողի և երեխայի պարբերական շփումները և այլն:

Մեկ այլ իրավիճակում, հնարավոր է անհրաժեշտություն առաջանա ապահովել երեխայի լսված լինելու և կարծիքն արտահայտելու իրավունքը, ինչի նպատակով կարող ենք միջնորդել դատարանին երեխային կանչել որպես վկա:

Ստորև ներկայացնում ենք այն միջնորդությունների ցանկը, որոնք կարող են նպաստել «երեխայի լավագույն շահերի» բացահայտմանը և ապահովմանը դատական քննության ընթացքում՝

- միջնորդել կիրառել հայցի ապահովում՝ թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ կհանգեցնի ներկայացված պահանջի փաստացի կատարման,
- միջնորդել գործը քննել դռնփակ դատական նիստում,
- ներկայացնել միջնորդություններ հոգեբան, մանկավարժ ներգրավելու համար,

- միջնորդել նշանակել դատահոգեբանական և այլ անհրաժեշտ փորձաքննություններ,
- միջնորդել երեխային կանչել որպես վկա:
- միջնորդել դատարանին ապացույցներ (փաստաթղթեր) պահանջել համապատասխան անձանցից կամ մարմիններից (օր՝ Նարկոլոգիական հանրապետական կենտրոն):
- դիմել դատարանին՝ դատական ակտի կատարումը հետաձգելու խնդրանքով,
- դիմել դատարանին հարկադիր կատարման միջոցով ապահովել խնամակալության և հոգաբարձության մարմնի եզրակացության տրամադրումը,
- այլ միջնորդություններ և օրենքով նախատեսված գործողություններ:

Իհարկե պետք է նկատել, որ վերոնշյալ ցանկը սպառիչ չէ և կոնկրետ գործի հանգամանքներից և առանձնահատկություններից ելնելով պետք է որոշել, թե օրենքով չարգելված ինչ միջոցներով և եղանակներով կարելի է հասնել «երեխայի լավագույն շահերի» բացահայտմանն ու ապահովմանը:

©UNICEF Armenia/2021/Gevorgyan-Publicis

Օգտակար նյութերի ցանկ

1. ՀՀ սահմանադրական դատարանի 05.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-919 որոշում
2. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0474/02/11 քաղաքացիական գործով 23.03.2012թ. որոշում
3. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով 01.04.2011թ. որոշում
4. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/4073/02/14 քաղաքացիական գործով 22.07.2016թ որոշում
5. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-432 (ՏԴ) քաղաքացիական գործով 30.03.2007թ որոշում
6. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1314/02/10 քաղաքացիական գործով 10.02.2012թթ որոշում
7. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0139/02/15 քաղաքացիական գործով 02.12.2016թ. որոշում
8. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-237/ՎԴ-2008 քաղաքացիական գործով 27.03.2008թ. որոշում
9. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1688/02/08 քաղաքացիական գործով 01.07.2011թ. որոշում
10. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/0124/02/12 քաղաքացիական գործով 28.12.2015թ. որոշում
11. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0264/02/11 քաղաքացիական գործով 27.12.2011թ. որոշում
12. Մարդու իրավունքների պաշտպանի Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույց
13. Schneider v. Germany գործով Եվրոպական դատարանի 15.09.2011 թվականի վճիռ
14. «Ս.»-ն ընդդեմ Ֆինլանդիայի գործով Եվրոպական դատարանի 09.05.2006 թվականի վճիռ
15. Gluhaković v. Croatia գործով Եվրոպական դատարանի 12.04.2011 թվականի վճիռ
16. Neulinger and Shuruk v. Switzerland [GC], no. 41615/07, § 135, ECHR 2010
17. Jovanovic and Gnahoré v. France, no. 40031/98, § 59, ECHR 2000 IX
18. Sommerfeld v. Germany [GC], no. 31871/96, § 64, ECHR 2003 VIII
19. Venice Commission Report on the Protection of Children's Rights, Adopted by the Venice Commission at its 98th Plenary Session
20. UN Committee on the Rights of the Children, General Comment № 12 (2009) on the Right of the Child to be Heard
21. UN Committee on the Rights of the Children, General Comment № 14 (2013)
22. UN Committee on the Rights of the Children, General Comment № 5 (2003) on the General Measures of Implementation of the Convention on the Rights of the Child

unicef
յուրաքանչյուր
երեխայի համար